Ուղղակի և անուղղակի կառուցված երկխոսությունների կիրառությունները պատմագրության հյուսվածքում սոսկ խոսքը փոխանցելու գործառույթներով չէ, որ սահմանափակվում են: Ուղղակի ներկայացվող երկխոսությունները միտված են նաև ցուցանելու, որ պատմության տվյալ դրվագը ներկայացվում է հնարավոր առավել մանրամասնությամբ: Բացի այդ՝ դրանց միջոցով առավել ցայտուն նկարագրով են ներկայանում պատմական տվյալ ժամանակաշրջանի հերոսներն ու գործող անձինք, ինչն արդեն ***գրականացնում*** է Դավրիժեցու տեքստը: Ինչպես գրում է Մայիս Ավդալբեգյանը՝ «Սա այն տարրն է, որի շնորհիվ ավելի են ընդգծվում զրուցող կամ բանավիճող զույգի մտային և հոգեբանական մարդկային անհատականութունները»[24]:

Սովորական ու ավանդական կառուցումների հետ մեկտեղ՝ երկխոսությունների պարագծում հաճախ ներկայացվում են խոսքային ու տեքստային առանձին միավորներ՝ ավարտուն և ամբողջական նկարագրով: Այդ կերպ՝ երկխոսություններում դրսևորվում են թղթային տարաբնույթ միավորներ: Այսպես՝ Մահմադ փաշայի պատվիրակները մյուս Մահմադ փաշայի հետ երկխոսության ժամանակ նրան են փոխանցում իրենց տիրոջ խոսքերը, որոնք կառուցված են նամակային սկզբունքներով (տե՛ս էջ 73): Իսկ ահա Շահ-Աբասը Հայաստանի մեծամեծերի հետ երկխոսության մեջ իր ասելիքի հիմնական մասը կառուցում է հրովարտակին բնորոշ միավորներով (տե՛ս էջ 77): Շահ-Աբասի խոսքում մի քանի հրովարտակներ են առկա Գրիգոր անունով քրիստոնյայի հետ նրա երկխոսության մեջ: Ահա դրանցից մեկը. «Թողի զձեզ ի կամս ձեր, գնացեալ պաշտեցէք զհաւատն ձեր» (էջ 162): Ասվածի ապացույցն է այն, որ կոնկրետ այս դեպքում՝ «Գրիգոր աղաչէր, պաղատէր, ի ծունր իջեալ լալով խնդրէր ի շահէն՝ և ասէր, թէ ***զհրամանսդ***, ***զոր բանիւ ասես, մատամբ միով թղթիւ շնորհեա մեզ»*** (էջ 162):

---

[24] Նույն տեղում, էջ 27: